տարահյուս տաղաչափության մեջ, միայն ճանաչյանի գրչով կարող էր հաջողապես փոխադրվել մի ուրիշ լեզվի»։

Շնորհալու իտալերեն այս հատորյակը զարդարված է Թորոս Ռոսլինի չորս մանրանկարների (վերցված Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրերից) արտատպությամբ, իսկ հատորի կազմը՝ ներսես Շնորհալու գունատիպ պատկերով։

Ա. ՏԱՅԱՆ

ԵՐԵՎԱՆՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԴԻ ՄԵԼԻՔ-ՕՀԱՆԵՍՈՎԻ «ԴԱՎԹԱՐԸ»

Մեզ է հասել Երևանցի առևտրական Կարապետ Մելիք-Օհանեսովի առևտրական գործարքների տետրը[1]։ Գրառումները կատարված են նրա կյանքի վերջին տարիներին՝ 1817—1819 թթ., երբ նա արդեն համբավ հանած վաճառական էր ունեցվածքի, ընտանիքի տեր։ Մելիք-Օհանեսովը ծնված պետք է լինի 1770—1775 թթ. և վախճանվել է 1819 թ.։ «Դավթարում» ոչինչ չկա նրա գործունեության սկզբնական շրջանի մասին։ Ի տարբերություն նախորդներից մեկի՝ առևտրական Զաքարիա Ագուլեցու[2], որը մանրամասնորեն գրանցում էր իր անցած ճանապարհի, ընտանիքի, դեպքերի ու այլ իրադարձությունների մասին, Կարապետը գրառում է միմիայն առևտրական գործարքները։ «Ավ թվին 1266 (1817) յոթոստոսի 1-ին, որ ես Կարապետս Մէլիք-Օվանեսով Երեւանից դուս ելայ որ գնամ Պոլիս իմ ամէն ինչըս գրեցի մէկ դավթարում, մնրեցի, դրի Սուրբ աթոռն որ է էջմիածին, որ ամէն բանըս գրած է, առըս և տուրըս և մալըս և պարտքըս և վորըս ինչս միուստ միոչէ գրած է այնտեղ», սկսում է նա իր «Դավթարը»։ Պոլիս է հասնում սեպտեմբերի 20-ին։ Նրան ընկերակցում էր քեռու տղան՝ Աղամալ Եղիազարյանը, որը նույնպես առևտրի էր գնացել։ Պոլսում Կարապետը գնումներ է անում ինչպես իր, նույնպես և Աղամալի համար, մեկ առ մեկ գրանցելով գնված ապրանքները, գները, նրանց համար վճարված մաքսը։ Գնում է մոտ 50 տեսակի ապրանք, դրանցից՝ թավիշ, չիթ, շալեղեն, ժամացույցներ, ոսկու կշեռքներ և այլն։ Պոլսում մընում է 6 ամիս և ապա՝ «Ավ թվին 1267 (1818) մարտի 18-ին, ես Կարապետ Մելիք-Օվանեսովս եկի Պոլսից Երեւան նստեցի, որ իմ արած Պոլիս խրիտն ծախեմ. այս է ծախըս և ամէն ինչըս միուստ միոչէ անվանի»։ Երևանում ապրանքը նա վաճառում է ոչ թե արշինով, այլ թոփերով. Միրզա Զաքարին՝ 20 թոփ, Գանջանլի Ալահվերտուն՝ 7 թոփ, վրացուն՝ 25 թոփ և այլն։ Կան նաև Երևանում վաճառվող ապրանքների գները։

Կա նրա մի նամակը՝ գրված նույն թվականի հուլիսի 25-ին էջմիածին՝ Ներսես Աշտարակեցուն, որից պարզվում է, որ Ն. Աշտարակեցին նրանից ինչ-որ հաշիվներ է պահանջել, որին Կարապետը պատասխանում է. «Ումպր էիր արել վասն գրերիս համար, որ բերեմք իմ ողորմած տէր, գրերըս Թիֆլիս բանի մէջ է, պիտի ծառայը գրնամ հանեմ թէ չէ ում գրեմ կամ ում ասէմ որ հանի գրկի» ու այնուհետև. «Կարող եմք ամէն կերպով գրօվ և տպով դուշմանիս հախեն դալ, երփ որ չի կարացի գրօվ կամ մալով պատասխանի տալ. յետոյ տէրութիւնդ որպէս Աց կանք տացէ որ ծառայիդ ետ գնամք շուտով գամք. ես ասի իմ եղբայրըս ինքն իրան խըջմլտանք անէ. թէ չի արեց իրան կամացն է ես պատրաստ եմ ի տանջանս, բայց աստված Անդոնի և Վախտանգի պէս ճշմարտութիւն չի կորուսանէ. ես իմ մալէս էլ անցանիմ, ջանես էլ անցայ և իմ օղլուշադես էլ անցայ, աստված հախըն նրհախի չի տայ. խնդրեմ պատասխանիս ջամրես որ քարվանն գնում է. ողջ լերուք. տերութեանդ խոնարհ ծառայ Կարապետ դի Մելիք Օվանեսեան, Երեւան»[3]։

Այնուհետև կատարում է երկրորդ ուղևորությունը՝ դեպի Թիֆլիս։ «Ավ թվին 1268-ի (1819) մայիսի 1-ին, ես Կարապետ Մէլիք-Օվանէսովս իմ ամէն բանովըս թէ փող, թէ մալ և թէ տան մէջ սալայմաթ ինձ հետ եկի քայդարըն՝ Մելիքի քարվանսարէն, ջուրամ ինչ ունեմ ինձ յետէ, բայց ինչ որ ծախում եմ կամ այլոց տամ կամ ում մօտն զաղ ունիմ այս դավթարումն կու գրեմ անվանի»։ Թիֆլիսում վաճառում է Պոլսից բերած ապրանքը։ Ահա Թիֆլիսի գրառումներից. «Ավ թվին 1268-ին (1819) ամսեանն մայիսի 20-ին Թիֆլիս քաղաքումն տվի պարոն Կուրկենին որ է երկուհարիւր երեք զաղ խառայ ֆրանկի մէկ զաղն 2750 դիանով, փոդի ջամնէ... որ փոդն յավթալուդով տալ ջամիին երեք թուման տալ մինչի վերջ լինելն այս իւղորովն տվի ու

1 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 31, վավ. 234։

2 «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», Երևան, 1938։

3 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 32, վավ. 89։

դրեցի դիտանիմ աղայ Կարապետ Խուսովին և պարոն Մելքոր Աստուածատուրովին կոնը աստվածին տացել նոցա բարի աջողութիւն որ հատուցէ». կամ մի այլը. «Այ թվին 1268-ին (1819) օգոստոսի մէկին ես Կարապետ Մելիք Օհանեսով Թիֆլիզ բաղարումն ամի Հայաստարցի պարոն Զալի Վէրմիշովին որ է ջամն երեք հարիւր թուման ներսակ փող մանէթս առ-ով որ տանի հաղ ինձի համար հաղ ու թել առնէ բերէ. Սրխ նախ...»։ Այսպիսի բազմապիսի առևտրական գործարքներ է անում նաև Վերջին գործարքը Մելքում Բաղինովին տված ապրանքն է, որով Մելքումը պարտավորվում է Շաբթում վաճառել նրա ապրանքը, ստանալով որպես աշխատավարձ 30 ռուբլի, որից 4 ռուբլին՝ նախօրոք։ Այդ ապրանքներն են. «64 դաղ ֆռանկի մախմուռ, 76 թոմի ալթունբաշ բաթան, 50 թոմի խառա հնտի, 33 դաղ ռուսի չիթ» և այլն։

Այս գործարքի կրառումով 1819 թ. հուլիսի 25-ին ավարտվում է «Դավթարը»։ «Դավթարիս վերջում 1820 թ. հունվարի 31-ին գրված հաշիվը, որը ստորագրված է Ն. Աշտարակեցու կողմից, վկայում է այն մասին, որ Կարապետ Մելիք-Օհանեսովը մահացել է, և Մելքում Բաղինովը իր վաճառած ապրանքի փողն (476 ռուբլի) ու մնացած ապրանքը հանձնում է Ն. Աշտարակեցուն ու Կարապետի եղբորը՝ Հարությունին։

Նրա մահից հետո սկսվում է մի գործ՝ կապված ժառանգության հետ։ Թիֆլիսի քաղաքային ատիկանությունը Ն. Աշտարակեցուն ուղղված մի գրությամբ պահանջում է Մելիք-Օհանեսովի կտակը, քանի որ նա Թիֆլիսում թողել էր դույք և կայք։ Դույքի և ունեցվածքի պահանջ է ներկայացնում նրա եղբայրը՝ Պետրոսը։ Սակայն կա Երևանի մի խումբ բնակիչների վրկայությունն այն մասին, որ Կարապետը իր եղբորից վաղուց էր բաժանվել և թողնելով «Սահար» թաղամասում ունեցած իր տունը, տեղափոխվել էր «Մափարաշիմ» (Գոնդ) թաղամասը։

Թուղթը ստորագրել են Պողոս Պապաջանովը, Թոմաս Տեր-Մարքիսովը, Գրիգոր Մանուչարովը, Գաբրիել Մելիք-Օսիպովը, Գալուստ Եղիազարովը, մելիք Սահակ Մելիք-Ադամալովը և ուրիշներ։ Ժառանգության պահանջ է ներկայացնում Կարապետի կինը՝ Հռիփսիմեն, որն ամուսնացել էր չինովնիկ Արսեն Պապաջանյանի հետ, բայց ուներ երեխաներ։ Հռիփսիմեին տրված է վկայական առ այն, որ «խոջա Կարապետ Քյալ Հովհաննեսովը ունի Հռիփսիմե անունով մի կին, որը ծնել է մի տղա և մի աղջիկ։ Բոբը մահացել է։ Մնացած պակասում է երեխաներին ու կրեոցը»։ Գրված է ախունդի կնիքը (մոլլա Ահմեդ), ստորագրված՝ ախունդ մոլլա Քյարիմ զաղի և ախունդ մոլլա Մեհտի։ Գործին կցված է նաև Հռիփսիմեի բերած օժիտի ցուցակը։

Ժամանակին լուրեր են պտտվել, թե Մելիք-Օհանեսովը կտակ չի թողել։ Մեզ հաջողվեց գտնել նրա կտակի պատճենը, ըստ որի՝ իր հայրական տունը թողել է տղային։ Ամբողջ ունեցվածքը 1895 թուական էր, որից էջմիածնի վանքին նվիրում է 632 թուման, կնոջը՝ Հռիփսիմեին՝ 300 թուման, 1000 թուման պատվիրում է տալ էջմիածնի վանքին տոկոսով, երեխաների համար։

Ներկայացված «Դավթարը» XIX դարի առաջին քառորդի առևտրական կապիտալի, ապրանքների ու նրանց գների, մաքսերի, դրամների լեռարերյալ մի ուշագրավ փաստաթուղթ է, որը նոր նյութեր է տալիս Երևանի ու Թիֆլիսի պատմությունն ուսումնասիրողներին։ Փաստաթուղթն արժեքավոր է նաև լեզվական տեսակետից, քանի որ ներկայացնում է երևանյան բարբառը կենդանի խոսքով։ Առևտրական տերմինների որոշ մասը օտարալեզու է, ինչպես՝ մալ, զալամ, գուսրուկ, խրիտ, ջամ և այլն, որը հատուկ է եղել այդ ժամանակվա առևտրական մատյաններին։

Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆ